

Հաշվետվություն

2023 թվականի նոյեմբերի 1-3-ը Հարավային Աֆրիկա (Քեյփթաուն) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Լուսինե Եղիյան, Կադաստրի կոմիտեի գեոմատիկայի կենտրոնի երկրատարածական տվյալների կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Հարավային Աֆրիկա (Քեյփթաուն), նոյեմբերի 1-ից 3-ը

3. Հրավիրող կողմը.

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիայի քարտուղարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն՝ «Երկրի ուսումնասիրության կազմակերպության հողերի դեգրադացիայի չեզոքացման թեմայով Գլոբալ երկխոսության առաջին» թեմայով համաժողովին

5. Քննարկված թեմաները.

Գլոբալ երկխոսության համաժողովի (GEO-LDN) շրջանակներում ընտրված երկրների կողմից (Քենիա, Սենեգալ, Նիգերիա, Գանա, Բելիզ, Բրազիլիա, Բոսնիա, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Մոնղոլիա, Իրաք, Բենին, Եթովպիա, Կոլումբիա, Հայաստան և Պերու) ներկայացվեցին հողերի դեգրադացիայի չեզոքացմանը միտված իրենց երկրի կողմից իրականացված քաղաքականությունը և աշխատանքները, մասնավորապես հողային ծածկույթի ստացման իրենց մեթոդաբանությունը և ստացված արդյունքները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Գլոբալ երկխոսության համաժողովի (GEO-LDN) շրջանակներում ՀՀ աշխատանքային խումբը ներկայացավ զեկույցով, որում ներկայացվեց ՀՀ հողային ֆոնդի առկա վիճակը, դասակարգիչները և կառավարման մեխանիզմները քարտեզագրական մոդուլում: Մյուս կողմից առանձնակի շեշտվեց Հողային ծածկույթի թվային քարտեզագրական շերտի ստեղծման անհրաժեշտությունը, որի դասակարգիչները սահմանվում են ՀՀ կառավարության N 431-Ն որոշմամբ և որը որպես Թեմատիկ շերտ ներառվելու է ՀՀ ազգային գեոպորտալում:

7. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Վերոնշյալ համաժողովի շրջանակներում ներկայացվեց Բնության պահպանության մոտեցումների և տեխնոլոգիաների համաշխարհային ակնարկը (WOCAT), որի ծրագրային հնարավորությունները կարող են կիրառվել նաև ՀՀ հողային ռեսուրսների վերլուծության համար:

8. Ստորագրությունը, ամսաթիվը:

Լուսինե Եղիյան



08.11.2023 թ.